

կայ ընդհանրապէս մահմետականացած Հայերուն մէջ. —) իսկ կանայք հայերէնէ զատ ուրիշ լեզու չեն գիտեր: Նոյնպէս հայախօս են Նէնիէն եւ Գարա-Թառ-Գ զիւղերը, որոնց համշէնցի հայ-մահմետականք Համշէնէ նախ գաղթած էին Լազաստանի Խոփէ քաղաքը, անկէ եկած են հոս: Նէնիճէի մօտ ուրիշ զիւղ մը՝ «Պաշ-Հաճէնի», կը ցուցնէ թէ համշէնի զլխաւոր աւանէն էին իրենց նախնիք. բայց ասոնց միայն ծերերը տակաւ ին հայախօս են: Գասապեան կը գտնէր թէ «այս հայ մահմետականք շատ մաքուր հայերէն բարբառ մը կը խօսին, նոյն իսկ աւելի մաքուր քան Հայ-Լազերունը», (Հմմտ. անդ, էջ 143—147, «Մահմետական Հայեր», գլուխը): «Հայ-Լազ» ըսելով կը հասկընայ համշէնցի ու Սեւ-Գեղացի հայք իստոնեայ գաղթականները, յորջորջանք մը զոր վերը մեկնեցինք:

Գաղթականութեան նոր հոսանք մը, մանաւանդ Համիտի հալածանաց օրերէն վեր, ծաւալած է դէպի Սեւ-Ծովու Կովկասեան ափերը, յատկապէս Սուխումի շրջանը: Համշէնցիք հիմնած են այլեւայլ զիւղեր եւ բազմաթիւ կայաններ, եւ իրենց ջանասիրութեամբ մշակած են խոպան հո-